ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ. ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց հաշվարկում, ԱՀԱ հիմնադրամի ներդրման գործընթացում պահանջվող ծախսերի միավորների գնահատում և ծախսերի հաշվարկում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ձևավորման հետ կապված օրենսդրական և ենթաօրենսդրական փաթեթի մշակում, հարակից փաստաթղթերի մշակման ընթացքում համապատասխան ծախսերի հաշվարկում, այդ թվում՝

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում Հիմնադրամի ձևավորման հետ կապած նորմերի, ձևակերպումների, սահմանումների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում:
2. Հիմնադրամի կանոնադրության նախագծի, Հիմնադրամի ստորաբաժանումների կազմի և նրանց աշխատանքային կանոնակարգերի, Հիմնադրամի աշխատակիցների պաշտոնների նկարագրերի, Կառավարման խորհրդի և դրա գործունեությունը կարգավորող փաստաթղթի, խորհրդի անդամների ընտրության և հեռացման կանոնակարգի, Կառավարման խորհրդին կից հանձնաժողովների ստեղծման և դրանց գործունեությունը կարգավորող փաստաթղթի, հանձնաժողովի անդամների ընտրության և հեռացման կանոնակարգի, հանձնաժողովի կողմից խորհրդատուների

ընդգրկման կարգի մշակում և համապատասխան գերատեսչությունների հետ համաձայնեցման աջակցում:

3. Հիմնադրամի ֆինանսական կառավարման՝ այդ թվում պահուստային և այլ ֆոնդերի կառավարման արդյունավետ մեթոդների վերաբերյալ խորհրդատվություն:
4. Հիմնադրամի ձևավորման, վերջինիս գործառույթների սահմանման դեպքում Առողջապահության նախարարության գործառույթների հնարավոր վերանայման, կառուցվածքի փոփոխության վերաբերյալ առաջարկների ներկայացում:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն, ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ անհրաժեշտության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ ամսական հաշվետվություններ աշխատանքի նկարագրում նախատեսված գործառույթների իրականացման վերաբերյալ:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության բնագավառում
- Ավելի քան 5 տարվա կառավարման և կազմակերպությունների ղեկավարման փորձառություն
- Առնվազն 5 տարվա փորձ ապահովագրական ընկերությունների կառավարման, ֆինանսական հսկողության, աուդիտի ոլորտում
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական կազմակերպության գործունեության թեմատիկ և պարբերական վերլուծության բնագավառում
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար

- Հայերենի, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ՝ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքի, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և, ըստ անհրաժեշտության, ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: